


ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան գին և Պարտք հար. 8 ՄՆՃ.
Գաւառաց 10 ՄՆՃ.
Վեցամս. և Պարտք 4 ՄՆՃ.
Պաւառաց 5 ՄՆՃ.
Օտար երկրներու 50 ՅՐ.
Նշանուցման տողը մէկ անգամի հա-
մար 3 զուրուշ, երկու անգամի հա-
մար 2 զուշ է. աւելի անգամներու
համար զատ սակարկութիւն կըլ-
այ :
Խորաքանչիւր թիւ 2 զընոց թուղթ .



ԼԵՐԱՔԵՐ

ՀԱՆՈՒՊԱԶՕՐԵԱՅ

ՊԱՅՄԱՆՔ

Գուրս գնացած լրագրաց ճանրու-
ած արք. Խորագրութեան վրայ է :
Լրագրոյս վերաբերեալ նամակ
կամ որ և ինչ գրութիւն Խորագրի
—Տնօրէնին տնօրէնի ուղղութիւն, Ղալա-
թիա Սանտրաքթար շատտէսի թիւ
498, Նօթո խան, Մասիսի գրասեն-
եակը :
Ճանրու ծախքը չմտաւած նա-
մակ չընդունուիր :
Չտպուած նամակ, յօդուած, և
ետ չեն տրուիր :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 20 ՓԵՏՐՎԱՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Կորչաքով իշխանը Պէրլինի վեհա-
ժողովին ժամանակ կրած անձկու-
թիւններէն ու աշխատութիւններէն
բաւական հանգիստ առած լինելու է,
որպէս զի նորէն իւր վարժ գրելը կը
շարժէ, և ըստ հեռագրական լրոյս
չըլտաբերական ծանուցագիր մը կուզ-
ղէ տէրութեանց՝ պահանջելով որ Պալ-
քաններն Օսմանեան զօրք զրկելու,
Արեւելեան Բուսթիլի ընդհանուր կա-
ռավարիչ անուանելու, և յիշեալ նա-
հանգիսի ինչպէս նաև Գարատաղի և
Ռուսիոյ (Սիւլիսթիէ կողմէն) սահ-
մանները դժելու ինքիւնները յուժուին :

Այս առաջարկութիւնը կրնայ բա-
ւական անակնկալ և դարմանալի թը-
ւիլ, և արդէն ամեն անոնք՝ որք Սը-
լավեան միութեան միւս տարերայ
սպառնացած վտանգը կը նախատե-
ան, Ռուսիոյ այս նոր ձեռնարկը
վերջին պատերազմին մէջ ունեցած
բաւ նպատակին հասնելու միջոց մը
կը համարին : Արդարեւ ի՞նչ էր Ռու-
սիոյ նպատակը. — Բրիտանիոյ ազա-
տութիւնը. բայց մինչև ցարդ Սլավ-
ներէն զատ բնաւ ուրիշ տարր մը չը
շահեցաւ. հետեւեալ Ռուսիոյ այս
արտաքուստ յոյս տուած նպատակը
իսկ հրապարակ մ'էր՝ Եւրոպիոյ կա-
կածն ու նախանշը չարժեքու համար
իւր իրական նպատակն էր Սլավաց
միութիւնը պարտաստել, և ամուր
գիրքեր տալ իւր դաշնակցաց կամ
արբանեկաց Օսմանեան կայսրութիւ-
նը Դանուբ կորոյս և Սլավոֆոնիսի
դաշնագրութեամբ Պալքաններն ևս
կը կորուսանէր, որով և Պարտք գու-
նէրը բաց կը մնային ապագային մէջ
Ռուսաց լեզուներուն : Բարեբաղդա-
բար Անգլիա միջամտեց, և Պէրլինի
վեհաժողովին մէջ իւր ձեռք բերած
նիւթերն Օսմանեան կայսրութեան
դարձնել, զոր Լորտ Պիքսֆիլդ իւր
աշխարհափարութեան իւր մեծ յաջո-
ղութիւն մը ներկայացոյց : Շատ չան-
ցաւ, Պալքանները Տօնտուքով-Քօր-
սաքով իշխանին ձեռք վերակադմը-
ւելով իրենց ազնկալից յոյսերն սկը-
սան, որով կըրպոյթէին Անգլիոյ դէմ,
նորա շահերը խճճելով, Օսմանեան
զօրաց իրենց դաւառը մտնելը նոր
արկունհեղութեանց առիթ կը համա-
րէին, և կը յարեին թէ ամենայն զօրու-
թեամբ պիտի գրկուէին Պէրլինի
դաշնագրութեան այն կէտերուն՝ որք
Արեւելեան Բուսթիլի դաւառը Բ. Դը-
բան կը վերագրանէին : Տօնտուքով-
Քօրսաքով իշխանն իսկ ֆիլիպէն մեկ-
նելուն առթիւ Եւրոպական յանձնա-
ժողովը կը հեղնէր, և Ռուս սպայք
Պէրլինի դաշնագրին Օֆէնսիվի և

բաժընագրութեան կը նմանեցնէին :

Գործն այն աստիճանի հասաւ,
որ Անգլիա ստիպուեցաւ պաշտօնա-
պէս բացատրութիւն ինքրեւ Ռուսիոյ
կառավարութեան, և դաշնագիր տե-
րութիւնը ալ միմեանց հետ բանակ-
ցելու պարտաւորեցան իրենց ըստ-
րագրութիւնն յարգել տալու համար :
Հետեւեալ Տօնտուքով-Քօրսաքով
իշխանը իրաւական հրաւիրեցաւ և
Խոսհմութեամբ շարժելու հրահանգ
առաւ. միւս կողմէն Ռուսիա պաշ-
տօնապէս յայտարարութիւններ ը-
րաւ թէ Պէրլինի դաշնագրութիւնը
պիտի դորձադրէ :

Թուրք-Ռուսական վերջին դաշ-
նագրին ատենագրութիւնը կըսէ թէ
Լօպանով իշխանն յայտարարեւ թէ
Ռուսիա ամբողջապէս և հաւատար-
մաբար պիտի դորձադրէ Պէրլինի
դաշնագրին, ըստ ոգւոյն և ըստ տա-
ւին : Նոյնը կըրկնց Սլավոնագր կայս-
րէն ալ իւր ժողովրդեան ուղղած
յայտարարութեան մէջ :

Ի՞նչ կը նշանակէ ուրեմն այսպի-
հանգիստը յայտարարութեանց հե-
տեւալ օրը Ռուսական այս նոր շըր-
ջաբերականը :

Միթէ Պէրլինի դաշնագիրը չը
տրամադրէր որ Արեւելեան Բուսթիլի
նահանգը վեհ. Սլավոնեան անուան-
եալ ընդհանուր կառավարիչ մը պի-
տի ունենայ Բրիտանիոյ լինելու
պայմանաւ, և նահանգին ծովային և
ցամաքային սահմաններն, այն է Պալ-
քաններն, Օսմանեան զօրք պահ-
պանուին :

Ռուսիոյ նոր առաջարկութիւնը
կրնայ ուրեմն բաւական չիֆթու-
թեանց պատճառ տալ և խաղաղու-
թեան ընդհուպ վերագործին ար-
դէք լինիլ. Գարատաղի սահմանե-
ները դաշնագրութեամբ դժուած են,
բայց գուցէ որոշուելու պէտք ունին.
Իսկ Ռուսիոյ սահմանին վրայ Սի-
լիսթիլի կողմէն բացուած վեճն
յայտնի է, և այս ինքիւնները խա-
նակութեան նոր տարրեր կ'աւելցը-
նեն : Սակայն իրաց ստույգ վեճակը
դատելու համար սպասելու է որ Ռու-
սական շրջաբերականն ամբողջ մեր
աչքին առջև ունենամք, և նայիմք
թէ Եւրոպական տէրութիւնը ի՞նչ
ընդունելութիւն պիտի ընեն անոր :

Գաղղիական Մօնթիթէօս իւնիվեր-
սիւլիւրագիրը Թուրք-Ռուսական վեր-
ջին դաշնագրութեան նկատմամբ նը-
շանաւոր յօդուած մը հրատարակած
է, որոյ զլիաւոր հաստատման ար-
ժան կը համարուի մեր ընթերցողաց
աչքին առջև դնել :

«Հաշտութեան և մշտնջենաւոր բա-
րեկամութեան» վիճակն անգամ մ'էս
հաստատեցաւ այն երկու տէրութեանց
միջև, որք, մէկ ու կէս դարէն աւե-
լի ժամանակէ ՚ի վեր, իրենց արկն-

առչտ կուտը չունեցողը դաշնագրի կը
լընեն :

«Բարեբաղդ կըլինէին հաւատա-
լով որ այս իրաւախօսութիւնը Թուրք-
Սլավոնական վեճին վերջնական
կարգադրութիւնը լինէր. բայց մեր
լաւատեսութիւնը մինչև անդ չեր-
թար : Թեև Գերմանական հին առած
մը կըսէ թէ «նիհար կարգադրու-
թիւն մը գիրով դատէ մը լաւագոյն
է», մեր կը կարծեմք թէ միջադրա-
յին դատարան մէջ բան մը կատար-
ւած չլինի՝ քանի որ ընտելը բան մը
մնայ : Միթէ Գարիգի դաշնագրու-
թեան մէջ ասոր մէկ զգալի օրինակը
չունեցանք : Այն դիւանագիտական
հաշակաւոր դործիքին հեղինակները
կը կարծէին որ իւր տեսակին մէջ դը-
րուի դործոց մը շինած էին, վասն զի
ինչպէս որ Պ. Տը Պուրքընէ ըսեւ էր
տեղեւոր պետական անձի մը, յիշ-
եալ դաշնագրութիւնն այն կերպիւ
խմբագրուած էր «որ ոչ յաղթեալ կը
յայտնէր և ոչ յաղթող» :

«Տարօրինակ պատրանք : 1836ի
դաշնագրութիւնը շինողներն արմա-
տական լուծմանց ձեռնարկելէ վախ-
նալուն պատճառաւ էր որ ամեն
պահանջմանց բաց դուռ թողուին, և
Պայտի կոմիտէն յաւիտեական պար-
ծանքը պիտի լինի 10 տարի վերջն Ա-
ւստրո-Հունգարական կայսրութեան
կառավարութիւնը ձեռքն առնելուն
պէս այս բանն հասկնալը : Ի՞նչ
չեն անշուշտ ընթերցողք այն նըշա-
նաւոր ծրագրին որով այդ պետական
անձն ամենէն առաջ համարձակեցաւ
Եւրոպական տէրութեանց ուշադրու-
թիւնն հրաւիրել 1836ի տրամադ-
րութեանց պահպանութիւններուն և
զանոնք վերադնելու հարկին վրայ,
առանց որոյ՝ Օսմանեան տէրութեան
ամբողջութեանը տրուած հաւաքա-
կան երաշխաւորութիւնը մեռեալ
տառ մը միայն կրնար լինիլ :

«Գաղղիական Անգլիա, որք Աւստ-
րիոյ հետ ՚ի միասին ապրիլի դաշնակի
դաշնագրութիւնն ստորագրած էին,
խորհարար մերժեցին Ռուսիոյ դու-
հայում շնորհելու միտում ունեցող
թիւրքութիւն մը, որոյ դէմ կը բու-
ղոքէ, կըսէին, խորմու դաշնութեան մէջ
թափուած արկնն», և այսպէս Ա-
ւստրիական նախարարին ըրած փոր-
ձքն ապարդիւն մնաց :

«Ասոր հետեւեալն այն եղաւ որ
Ռուսիա իրաւունք ունենալ կարծեց
առաջին առիթ մը ներկայանալուն
պէս իւր վեճին առնուլ, և չորս տա-
րի վերջը, նոյն իսկ Լոնտոնի մէջ
դուռմարտած միջադրային դեպքանա-
խօրհուրդ մը պարտաւորեցաւ ՚ի
մեծ ամօթ Անգլիոյ՝ Ռուսական տե-
րութեան վերստին իրաւունք տալ
իւր մօրտանաւորն ազատաբար Սի-
ժովու մէջ պաշտոնելու : Բայց անով
չմնացաւ, հազիւ քառամեայ նոր շըր-

ջան մ'ալ անցած էր, և ահա Արեւ-
ելի Սլավոններն այն սարսափելի փոթո-
րիկն յարուցին, որ Օսմանեան տե-
րութեան վերջին բեկորներն յաւիա-
եանս կընել սպառնացաւ :

«Ինչ որ Գարիգի դաշնագրու-
թիւնը չէր դիտարկ ընել, Պէրլինի
դաշնագրութիւնն ալ չդիտարկ ընել
թէ՛ ՚ի Պէրլին և թէ՛ ՚ի Գարիգ ան-
կատար լուծումներով դուժ եղան,
բայց դուռ թողով ապագայ կնճոց :

«Պէրլինի մէջ անկատար կերպիւ
կարգադրուած խնդրոց մին է պա-
տերազմական տուգանաց խնդիրն,
և չեմք տեսներ որ այդ խնդրոյն կար-
գադրութիւնը լաւագոյն կերպիւ
սահմանուած լինի Ն. Պոլիս ստորա-
գրուած վերջին դաշնագրութեան
մէջ : Ամեն հաշիւ ընելէ ետեւ, Թուր-
քիա 802 ու կէս միլիոն ֆրանքի ահա-
գին գումար մը պարտական ճանչուած
է Ռուսիոյ Օսմանեան դանձն, որ
քաղաքական և զինուորական երկա-
րատե տագնապով սպառած և հինգ-
երկիրն ֆրանքի պարտքով մը սը-
նանկացած է, ի՞նչպէս պիտի կար-
դանայ դրամով հատուցանել այս նոր
և անհեթեթ պարտքը : Միւս կողմէ
Պէրլինի դաշնագրութիւնը, զոր ըս-
տորագրող տէրութիւնք յարգելու
պարտական են, այդ պատերազմա-
կան տուգանքն երկիր տալով վճա-
րելու որ և է կարգադրութիւն կ'ար-
դէլու :

«Ռուսիա, մէկ կողմէ այսպէս հան-
դիւարար հաստատեալ հասարակա-
կային իրաւանց և միւս կողմէ Օսմ-
անեան յետին չքաւորութեան առ-
ջև ի՞նչ կրնար ընել : Առնելիքն հը-
րաժարիլ : Այնպիսի զոհողութիւն
մ'է այս՝ զոր յաղթող մը կամովին
չընեն : Ռուսիա Ն. Պոլսոյ դաշնագ-
րութեան ըրածէն զատ ուրիշ բան
չէր կրնար ընել. այն է իւր պարտա-
տիրութեան իրաւունքը գրեթէ ա-
կադեմիական կերպիւ հաստատել՝ ու-
ռանց հատուցման որոշ թուական
պայմանագրելու :

«Բայց երկու դաշնագիր կող-
մանց փոխադարձ կացութեան այս
անխուսափելի տարտամութիւնն ի-
րօք Գամիլիէսի սուր մը կը լինի շա-
րունակ անոնցմէ միայն դիտողն վրայ
կախուած : Ամեն ժամանակ և ամեն
առիթու պարտաւոր կրնայ պոր-
տապանին դէմ իւր իրաւունքը գոր-
ծադրելու ելնել. և թէ՛ օրինակի
համար՝ Գուան Եւրոպիոյ հրապա-
րակներէն փոխառութիւն մ'ընել
փորձէ, Ռուսիոյ մէկ բողոքը կրնայ
Լոնտոնի հրապարակ փակել անոր
դէմ, որովհետեւ բողոքմանց պարտա-
դային մէջ Լոնտոնի Պարտքին խիստ
սկզբունքը ծանօթ է :

«Ընթերցողք կրնան դատել թէ
ի՞նչ չիֆթութիւն կրնայ ծագիլ առ-

ՏՓԹԻՍ. Պ. Երկողայու Տ. Կեռնդեան,
ԿԱԼԿԱԹԱ, Պետրոս աղա Հեթմեան: